



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
«ԱՐՏԱԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ»
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
375010 ԵՐԵՎԱՆ-10, ԲՅՈՒԶԱՆԴԻ 1/3 ՀԵՈ. 54-15-13

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
ЗАКРЫТОЕ АКЦИОНЕРНОЕ ОБЩЕСТВО
“ВНЕВЕДОМСТВЕННАЯ ЭКСПЕРТИЗА”
375010 ЕРЕВАН-10, БЮЗАНДА 1/3 ТЕЛ. 54-15-13

Պեա. Լիցենզիա 16973 և 13629

№ 20-047

«06» 02 2020թ.

ԵՐԵՎԱՆ

ՀՀ ԿԳՄՍ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Կոտայքի մարզի Մեղրաձոր գյուղի Թեժառույք վանական համալիրի ամրակայման, նորոգման և վերականգնման նախագիծն անցել է փորձաքննություն «Արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ-ում, ստացել դրական եզրակացություններ՝ թիվ 15-385 առ 21.12.2015թ.:

Ներկայումս նախագիծն առանց փոփոխությունների ներկայացված է փորձաքննության:

Քանի որ նշված ժամանակահատվածում գործող նորմերի փոփոխություններ տեղի չեն ունեցել, նախագիծը երաշխավորվում է համաձայնեցման և հաստատման:



Տնօրեն

Վ. Սարգսյան



№ 15-385

«21» 12 2015թ.

Ե Ր Ե Վ Ա Ն

Մշակույթի նախարարություն

Կից ուղարկվում է ՀՀ Կոտայքի մարզի Մեղրաձոր գյուղի Թեժառույթ վանական համալիրի ամրակայման, նորոգման և վերականգնման նախագծի վերաբերյալ փորձաքննության եզրակացությունը:

Առդիր՝ փորձաքննության եզրակացություն՝ 3 էջից:

Տնօրեն

Վ. Մարգարյան

«ԱՐՏԱԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ»

ՓԲԸ

ՊԵՏԱԿԱՆ ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐ 11528 և 13629



ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Կոտայքի մարզի Մեղրաձոր գյուղի Թեժառույթ վանական համալիրի ամրակայման,
նորոգման և վերականգնման նախագծի վերաբերյալ

Պատվիրատու

ՀՀ Մշակույթի նախարարություն

Նախագծող

«Անիշիննախագիծ» ՍՊԸ

Նախագծման հիմքը՝

ՀՀ Մշակույթի նախարարության Պատմության և մշակույթի
հուշարձանների պահպանման գործակալության պետի հետ
համաձայնեցված նախագծային առաջադրանքը

Նախագծին կցված է «Անիշիննախագիծ» ՍՊԸ-ի կողմից տրված համալիրի տեխնիկական
վիճակի և հինանորոգման անհրաժեշտ միջոցառումների կատարման վերաբերյալ
եզրակացությունը:

Համաձայն տեխնիկական եզրակացության, վանական համալիրը բաղկացած է Գլխավոր
եկեղոցուց, Հարավային մատուռից, Արևմտյան գավիթից և Հյուսիսային մատուռից,
հատակագծում ունի 21.0 x 17.6 մ արտաքին չափեր:

Ինչպես նշվում է տեխնիկական եզրակացությունում, կառույցը գտնվում է խիստ
վթարային վիճակում: Տարիների ընթացքում արտաքին ազդեցություններից կառույցը ստացել է
վնասվածքներ, կատարվել են ձևախախտումներ, որոշ հատվածներ փլուզվել են:



Վնասվածքների պատճառ են հանդիսացել պատերի և տանիքի մեջ ներթափանցված ջրերը, սառեցման և հալման երևույթները, ինչպես նաև տեղի ունեցած բազմաթիվ երկրաշարժերը և այլն: Այնուհետև բերվում են հանձնարարականներ կառույցի ամրակայման վերաբերյալ:

Կատարվել է նաև եկեղեցու պատից շաղախի մնուշի հետազոտություն:

«Երկրաբան-Ուտիք» ՍՊԸ-ի կողմից ներկայացված է տեղամասի ինժեներա-երկրաբանական պայմանների եզրակացությունը (Երևան, 2015թ), համաձայն որի տեղամասի երկրաբանա-լիթոլոգիական կտրվածքում առանձնացվել են գրունտների հետևյալ շերտերը՝ հողաբուսական ծածկույթ 0.7...1.0 մ հզորությամբ և ավազային գրունտներ 0.5 մ բացահայտված և շատ ավելի հզոր հաստությամբ: Գրունտային ջրերը գտնվում են 20 մ-ից ավելի խորը միջերում:

Կառույցի հիմքերը ժապավենային են, տեղադրված են ավազի շերտի վրա, իրականացված են բազալտե բուտաքարերից՝ կրային շաղախով:

Գրունտային պայմանների գործակիցը կազմում է 1.0 մ: Հիմնատակի գրունտներն ըստ սեյսմիկ հատկությունների դասված են երկրորդ կարգի: Տարածքը գտնվում է երկրորդ սեյսմիկ գոտում: $A_{max} = 0.3g \times 1.0 = 0.3g$:

Նախատեսվում է նորոգել (կառուցել) հուշարձանին մոտեցման ճանապարհը և կազմակերպել ավտոկայանատեղի:

Արտաքին ջրերի հեռացման համար նախատեսվում է թեքահարթակի իրականացում: Նախատեսվում է մաքրել հիմքերը և ծածկել հիմքերի կարանները կրաշաղախով, պատել հիմքերը 4 մմ տրամագծի բազալտե ամրանացանցով և B 15 դասի կրաբետոնով: Պեղված տարածքում գրունտի վրա իրականացվում է բազլտե խամքարե շերտ 20...25 սմ հաստությամբ: Կրաբետոնե լիցքը իրականացվում է մեծահատիկ և մանրահատիկ բազալտե խճաքարով:

Նախատեսվում է իրականացնել բացակայող հատակները: Տեղադրվում են բազալտե խամքարե մեծահատիկ խճաքարով տոփանված շերտեր, որոնց վրա տեղադրվում է վերին հարթ շերտը 2...3 սմ հաստությամբ՝ կրաավազային շաղախով:

Իրականացվում են նոր սալահատակներ խորաններով:

Նախատեսվում է վերականգնել պոկված և տեղում ընկած բեկորները: Որպես կապակցող օգտագործվում է մանրահատիկ ավազաով կրաշաղախը:

Հատակների միջերի տարբերության պատճառով նախատեսվում է նոր աստիճանների իրականացում բազալտե կանոնիկ և հարթ տաշվածքով միակտոր մեկորներով:

Նախատեսվում է վերականգնել պատերի բացակա հատվածները և քարերը:

ճաքերի և ճեղքերի ամրակայումը նախատեսվում է կատարել կրաշաղախի կարանախցման միջոցով՝ բարդ կրաշաղախի ներարկմամբ:

Ծածկերի իրականացումից առաջ լանջերի վրա տեղադրվում է կրաբետոնե շերտ 6 սմ հաստությամբ, որն ամրանավորվում է 4 մմ տրամագծի բազալտե ամրացանցով՝ 100 x 100 մմ

բջիջների չափերով: Այդ շերտի վրա տեղադրվում են պահպանված և նոր տաշ արած ծածկասալերը:

Կատարվել է կառույցի հաշվարկ վերջավոր էլեմենտների հիմքով աշխատող հաշվարկային ծրագրով, որում ընդունված է, որ պատերի ճաքերը և ճեղքերը հուսալի ներարկվելու են կրաշաղախով, հեռացումները ամրացվելու են, քայքայված կրաշաղախի հատվածները վերանորոգվելու են և փոխարինվելու են նորով: Որոշվել են պատերում գործող լարումների մեծությունները:

Առաջարկվում է, որպես անհրաժեշտություն, փոխել կառույցի հաշվարկային սխեման, բեռնափափելով ներկա կրող համակարգը և կատարել ուժեղացում լրացուցիչ կրող կոնստրուկցիայինների իրականացման միջոցով:

Եկեղեցու ամրակայման համար օգտագործվում են 25 մմ տրամագծի A500c ձողերից պատրաստվող ձգաններ, որոնք տեղադրվում են պատերում իրականացվող անցքերի մեջ, որոնք լցվում են կրախմորով: Տեղադրվող ձգանների նիշում պատերի վրա արտաքին կողմից որպես հենարան տեղադրվում են պողպատե գլոցված N 14 շվեյներներ, որոնք առաջացող լարումները կփոխանցեն պատերին:


Նույն եղանակով 20 մմ տրամագծի A500c դասի ձողերից պատրաստվող ձգանների միջոցով ուժեղացվում են գավիթի պատերը:

Ուսումնասիրելով ներկայացված նախագիծը «Արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ նշում է՝

➤ *ներկայացված նախագծի վերաբերյալ դիտողություններ չկան:*


Եզրակացություն՝ նախագիծը երաշխավորվում է համաձայնեցման և հաստատման:

Փորձագետ, ճարտարապետ



Մ. Մկրտչյան

Փորձագետ, տեխ. գիտ. թեկնածու



Գ. Վարդանյան